ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1383

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՍՏԱՑ № 4666
«04» 11 2013 թ.

01.11.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ

գեներալ-լեյտանենտ

պարոն. Վ.Գասպարյանին

<< Ոստիկանության պետ, գեն. մայոր
Մուտք թիվ 4398
«04» 11 2013 թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հոկտմբեր ամսին Դիտորդական խումբը այցելության կատարելով ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Մարտունու ՁՊՎ արձանագրել է, որ ընդհանուր պահման պայմանները և նախկինում ներկայացված թերությունները վերացված էին, բայց ՁՊՎ-ի գրանցամատյանները ուսումնասիրելուց արձանագրվել են խախտումներ: Դրանք են՝

1. Գոհարիկ Հերցենի Ավետիսյանը ով ՁՊՎ-ում պահվել է 05.08.2013թ-ին ժամը 14[00]-ից մինչև 08.08.2013թ. ժամը 14[10]-ը մասնակցել է քննչական գործողությունների սակայն դրանց վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի հայտերը բացակայում են նրա անձնական գործից:
2. Այն կալանավորները որոնք ՁՊՎ են տեղափոխվում դատաքննությանը մասնակցելու, նրանց ՁՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում դատավորի գրությունը, առանց ՀՀ օրենսդրությամբ նախատեսված որոշման:
3. Ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի անձիք ընդունվում են ՁՊՎ և որոշակի ժամանակ պահվելուց հետո համապատասխան գրանցամատյանում նշված անձանց հետագա գործողությունների վերաբերյալ կատարվում է տարօրինակ գրառում <<ընդունեցի կալանավորին իր անձնական գործով, ամիս ամսաթիվ, օր, ժամ, ինչ որ անձի ստորագրություն և ինչ որ անձի անուն ազգանուն>>: Նշվածից անհասկանալի է, թե ով է ընդունել կալանավորին իր

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1[ա] Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

անձնական գործով, ինչ նպատակով և որտեղ է տեղափոխվել կալանավորը: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկար – 1,2/*

Այսպիսով խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում ենք Դիտորդական խմբի հրատապ հաշվետվություններին տալ առանձին մեկնաբանություններ՝ չընդհանրացնելով մարզի մնացած ՁՊՎ-ներում առկա հիմնախնդիրների հետ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հասմիկ Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

N- 2/2-1- 3393 «29» 11 2013թ.

Ձեր՝ 01.11.2013թ. թիվ 2621/1383 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցի ընթացքում արձանագրված թերությունները և խախտումները քննարկվել են ՀՀ ոստիկանության շտաբում, քննչական գլխավոր և Գեղարքունիքի մարզային վարչություններում:

Արձանագրված թերությունների և խախտումների կապակցությամբ ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

1. Գոհարիկ Ավետիսյանը ոստիկանության Մարտունու բաժնի հերթապահ մասի ՁՊՎ-ում պահվել է 05.08.2013թ. ժ.14.10-ից մինչև 08.08.2013թ. ժ.14.00-ը, այլ ոչ թե 05.08.2013թ. ժ.14.00-ից մինչև 08.08.2013թ. ժ.14.10-ը և այդ ժամանակահատվածում մի քանի անգամ մասնակցել է քննչական գործողությունների, որոնց վերաբերյալ գրառումներ են կատարվել <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում (կից ներկայացվում է համապատասխան էջի պատճենը):

2. Ինչ վերաբերվում է դատարանի /դատավորի/ կողմից կալանավորված անձանց ՁՊՎ-ում պահելու մասին որոշում չկայացնելու հանգամանքին, ապա նշված հարցի

պարզաբանումը գտնվում է դատական դեպարտամենտի իրավասությունների և լիազորությունների շրջանակներում:

3. Ծառայողական քննությամբ հիմնավորվել են <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում անձի տեղաշարժի մասին գրառումները թերի կատարելու և համապատասխան նշումներ չկատարելու հանգամանքները, որի համար, ոստիկանության Մարտունու բաժնի հերթապահ մասի պետ Շ.Էլոյանը ենթակա է կարգապահական տույժի, սակայն հաշվի առնելով, որ նա բաժնի ղեկավարության կողմից բնութագրվում է դրական, նման կարգապահական խախտում թույլ է տվել առաջին անգամ և հայտնաբերված թերությունն էական հետևանքներ չի առաջացրել, ուստի վերջինս նախազգուշացվել է:

ՀՀ ոստիկանության շտաբ